Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալով՝

Առկա խնդիրների նկարագրությունը

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի թիվ 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի, համայնքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից ստանալու է 2 916 338 դրամ աջակցություն գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանքի ծրագրի իրականացմանն աջակցելու համար, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային մասում՝ որպես այլ եկամուտ և ծախսային մասում նախատեսել որպես ընթացիկ դրամաշնորհ՝ փոխհատուցելու շահառուներին փաստացի կատարված ցանքի դիմաց:

Համայնքապետարանի առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից իրականացված աշխատանքների վերլուծության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել 2025 թվականի բյուջեի եկամտային մասում պլանավորված տեղական տուրքերի առաջադրանքն ավելացնել 18 329,0 հազար դրամով:

Համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1313-Ն որոշման, մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով, կառավարությունն ու համայնքը համատեղ կնքել են ընդհանուր 76 158,8 հազար դրամի կապիտալ սուբվենցիայի պայմանագիր: Նշված գումարն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային և ծախսային մասերում:

Ծախսային մասում անհրաժեշտ է արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցներն ավելացնել 3 000,0 հազար դրամով:

«Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքային ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար նախատեսված միջոցներն անհրաժեշտ է ավելացնել 20 000,0 հազար դրամով մինչև տարեվերջ առաջացած խնդիրները կարգավորելու համար:

05,08,2025 թվականի Մասիս համայնքի ավագանու թիվ 231-Ա և 12,09,2025 թվականի թիվ 279-Ա որոշումներով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել «Մասիս համայնքի կոմունալ

տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին հատկացնել լրացուցիչ 33 738,0 հազար դրամ ֆինանսական միջոցներ, ինչպես նաև 5 000,0 հազար դրամ այլ կոմունալ ծառայությունները ժամանակին և պատշաճ որակով իրականացնելու համար:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը Մասիսի համայնքապետարանի հետ համատեղ նախատեսում են Զորակ բնակավայրում իրականացնել նոր բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի վերանորոգման ծրագիր: Բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի նախագծային արժեքը կազմում է շուրջ 16 000,0 հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրման չափը կկազմի մոտ 10 000,0 հազար դրամ:

ՄԱԿ-ի Զարգացման մեկ այլ ծրագրով նախատեսվում է իրականացնել Նիզամի բնակավայրի վարչական շենքի նորոգման աշխատանքները և թվով 500 լեդ լուսատուների ձեռք բերում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 50 000,0 հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրման չափը կկազմի 15 000,0 հազար դրամ:

2025 թվականին Մասիս համայնքում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվելիք խմելու ջրագծերի նորոգման և կառուցման աշխատանքային նախագծերը միջգերատեսչական հանձնաժողովի պահանջով կարիք է առաջացել վերանախագծելու և վերահաշվարկելու, որի համար անհրաժեշտ է 500,0 հազար դրամ:

Համայնքապետարան է դիմել Մասիս համայնքի Դուքենդո ֆեդերացիայի նախագահը աջակցության խնդրանքով: Ֆեդերացիան կարիք ունի ձեռք բերել մարդանման տանձիկներ, որի համար խնդրում է 1 673,0 հազար դրամի աջակցություն:

Համայնքում գործող մեկ այլ սպորտային ֆեդերացիա՝ «Արմ Շամս», մարտական մենամարտերի պարապմունքներ է անցկացնում և սոցիալապես անապահով երեխաների հետ անվճար է պարապում:

Ֆեդերացիան նախատեսում է ձևավորել նոր խմբեր, որի համար աջակցություն է խնդում 1 578,0 հազար դրամ:

Համայնքում պարբերաբար իրականացվող մշակութային միջոցառումների համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 6 000,0 հազար դրամ:

Մասիս համայնքում առկա խաղահրապարակների նորոգման և նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքների համար ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ հայտարարվել է գնման ընթացակարգ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 45 180,0 հազար դրամ:

Նորաբաց բնակավայրում կառուցվող բազմաֆունկցիոնալ խաղահրապարակին կից առկա է 4500 քմ համայնքային տարածքը, որն առաջարկվում է բարեկարգել և դարձնել զբոսայգի: Աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 1 100,0 հազար դրամ:

2025 թվականի սեպտեմբերի 12-ի Մասիս համայնքի ավագանու թիվ 280-Ա որոշմամբ ստեղծվել է «Մասիս մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ը, 281-Ա որոշմամբ հաստատվել է ՀՈԱԿ-ի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը: Ելնելով վերոգրյալից

անհրաժեշտ է ՀՈԱԿ-ի գործունեությունն ապահովելու համար բյուջեում նախատեսել 13 020,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների									
						Հազար դրամ			
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Եկամուտներ*	*Ֆոնդային մասի Եկամուտներ*	*Վարչական մասի ծախսեր*	*Ֆոնդային մասի ծախսեր*
				Եկամուտներ					
1				Կապիտալ սուբվենցիա			76 158,8		
2				Տեղական տուրքեր առևտրից		18 329,0			
3				Այլ եկամուտ		2 916,338			
				Ծախսեր					
4	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Արտասահմանյան գործուղումներ	4222			3 000,0	
5	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239			-90 680,0	
6				Սուբսիդիա	4511			20 000,0	
7	**04**	**2**	**1**	**Գյուղատնտեսություն.** Այլ ընթացիկ դրամաշնորհ	4639			2 916,338	
8	**05**	**1**	**1**	**Աղբահանում.** Սուբսիդիա	4511			15 820,3	
9				Ընթացիկ դրամաշնորհ	4637			22 654,6	
10	**05**	**6**	**1**	**Շրջակա միջավայրի պաշտպանություն.** Ընթացիկ դրամաշնորհ	4637			263,1	
11	**06**	**2**	**1**	**Համայնքային զարգացում.** Կապիտալ դրամաշնորհ միջազգային կազմակերպություններին. Զորակ բնակավայրում նոր բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի վերանորոգում /ՄԱԶԾ/	4622			10000,0	
12				Նիզամի բնակավայրի վարչական շենքի նորոգում /ՄԱԶԾ/	4622			10000.0	
13				Լեդ լուսատուներ	4622			5000.0	
14				Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134				-46780.0

15				Այնթապի հերոսամարտը հավերժացնող հուշարձան կոթողի հարակից այգու բարեկարգում /մասնակցային/սուբվենցիա	5112				22 958,8
16				Այնթապ բն. մ/պ հարակից տարածքում այգու կառուցում /մասնակցային/սուբվենցիա	5112				15 200,0
17				Նոր Խարբերդ բն. մշակույթի տանը հարակից տարածքում պուրակի կառուցում /մասնակցային/սուբվենցիա	5112				38 000,0
18	**06**	**3**	**1**	**Ջրամատակարարում.**Շենք շինությունների կառուցում	5112				-380,3
19				Դարակերտ և Մարմարաշեն բնակավայրերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքներ	5113				380,3
20				Մասիս համայնքի թվով 5 բնակավայրերի խմելու ջրագծի նորոգման և կառուցման աշխ. նախագծի վերանախագծում և վերահաշվարկում	5134				500,0
21	**08**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Նվիրատվություն Դուքենդո հայկական ֆեդերացիա ՀԿ-ին	4819			1 673,0	
22				Նվիրատվություն Արմ Շամս ֆեդերացիա ՀԿ-ին	4819			1 578,0	
23				Մասիս համայնքում առկա խաղահրապարակների նորոգման և նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքներ	5113				45 180,0
24				Նորաբաց բն. կառուցվող ֆուտբոլի դաշտի հարակից ազատ տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134				1 000,0
25				փորձաքննություն	5134				100,0
26	**08**	**2**	**3**	**Մշակույթի տներ.** Սուբսիդիա	4511			13 020,0	
27	**08**	**2**	**4**	**Այլ մշակութային կազմակերպություններ.** Ընդհանուր բնույթի·այլ ծառայություններ	4239			26 000,0	
28				Հատուկ նպատակային նյութեր	4269			-20 000,0	
29	**09**	**2**	**2**	**Միջնակարգ կրթություն.** Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող	4819			-33 500,0	

				կազմակերպություններին					
30				Ընթացիկ դրամաշնորհ	4637			33 500,0	
				Ընդամենը		***21 245,338***	***76 158,8***	***21 245,338***	***76 158,8***

Բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կավելանան 21 245 338 դրամով, ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը կավելանան 76 158 800 դրամով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ն" ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա" ԿՈՍՏԱՆՅԱՆ